

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 Յր.
Վեցամսեայ	6 »
Արժանահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 Յր.
Վեցամսեայ	1.50 »
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՃԱՐՆԵԼԻ	

Մանուցման տողը ստացիկ երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքեկ անկի անլավներու համար 20 Օլո գեղջ կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ԱՄԵՐԻԿԱ)

ՇՆԱԲԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԵՎ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ յեռ տրուի

Արժանահմանի համար ձեռքի
(20 ԱՄԵՐԻԿԱ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն. որոնք վճարած չեն, կը խնդրենք անյայտ զրկել բաժնեգրիները, որովհետեւ առաջին վեցամսեան կը լրանայ. Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կ'ըլլայ:

ՄԵՐ ՎԱՐՔԱՐԱՆՆԵՐԸ

«Տարիներէ ի վեր մեծ կակ գունամաներ կը ծախսենք մեր մանուկներու մտաւոր զարգացմանը համար, բայց ոչ ինչ շոշափելի արդիւնք չենք տեսներ. վարժարաններէն ելլող, փայլուն քննութիւններով աւարտական եւ զող մեր տղաքները, կեանքի մէջ ոչ մէկ գործի յարմար չեն ըլլար»:

Ահա յաւիանական յանկերգը բոլոր այն միամիտներուն, չըտենք չարամիտ, որոնք թէ երկրին և թէ արտասահմանի մէջ, դպրոցական տարեվերջի այս օրերուն, կուգան մամուլի մէջ իբրև օրուան խնդիր շոշափել անգամ մը եւս կրթական հարցը հարեւանցի, պարզ մակերեսային զննողութեամբ մը միայն, առանց

ծիշք, արգար բազմատուրիւն մը ընելու մեր կրթական անցեալ և ներկայ վիճակին մէջ:

Եւ այս յոռետես ու կեղծ քննադատութիւն՝ անիրաւօրէն այնքան կրկնուած, այնքան սովորական եղած է. որ քիչ քիչ բոլոր դրած է մեր բոլոր խաւերուն մէջ, և ժողովուրդի հաւատքը խախտած դէպի ազգային կրթարանները և դէպի հայ ուսուցիչը:

Մենք հեռու ենք մեր վարժարանները նկատելէ իբրև տիպար հաստատութիւններ, անքննադատելի և որոնց մէջ կարելի չըլլայ ուր է փոփոխութիւն մտցնել. մենք չենք ըսեր թէ մեր աւարտականները, դպրոցը թողլէ երկու վայրկեան վերջը կը յաջողին կեանքի մէջ որոշ գիրք մը ձեռք բերել, և կարճ ժամանակի մէջ յաջողութենէ յաջողութիւն ցածր կ'ըլլան իրենց ծնողաց պարպաւած գրպանները լեցունել. բայց չենք այ կ'ընար սառնօրէն ընդունիլ թէ հայ վարժապետի տրուած ստակը ծովը նետուած գրամ մըն է ու յաւատ կորուած, թէ մեր վարժարաններու վրայ տարուած ջանքերը ամուլ ժայռի մը վրայ թափուած քրտինքներ են:

Պատիկ բազմատուրիւն մը մեր

դպրոցական անցեալ և ներկայ ծրագրիներուն, դասաւանդութեանց եղանակներուն, պիտի հաստատեն, թէ՛ մեր ներկայ վարժարանները ընդհանուր կերպով առնելով անհամեմատապէս աւելի բազմ են, աւելի նպատակայարմար ուղղութեամբ կը կառավարուին քան 15—20 տարի առաջ եղածները. և թէ ներկայ սերունդը, այս վերջին տասնամեակին մէջ մեր դպրոցներէն ելլող երիտասարդութիւնը, աւելի խնամով դաստիարակուած, աւելի առողջ և գիտակից գաղափարներով լեցուն է, քան իր նախորդը, կապացուցուի այժմեանին ազգայնական, կրթական և յառաջդիմական շարժումներէն, ձգտումներէն և ըմբռնումներէն:

Չը խաբուինք, չը խաբենք և չը մոլորեցնենք ժողովուրդը. տարրական կրթութիւն մը միայն է որ կուտանք մեր տղաքներուն. և ասոր համար շատ ոչինչ գումար մըն է որ կը ծախսենք. ծիծաղելի կըլլանք երբ կը պահանջենք որ մեր դպրոցականները մէկ թափով և կարճ ժամանակէն՝ կեանքի մէջ ձեռք բերեն ինչ որ մենք չենք յաջողած երկար տարիներու աշխատութեամբ:

Քննադատել կարելի է չէ թէ

միայն հայուն, այլ և աւելի աւելի ազատ և աւելի զարգացած ազգերու կրթական ուղղութիւններն և մանկավարժական մեթոտներն. ցաւալի պիտի ըլլար եթէ քննադատութիւնը իր պաշտօնը աւարտած սեպելով օր մը դադրեր իր մտրակող դերը կատարելէ, վասն զի այդ օրն յառաջդիմութիւնն ալ կանգ պիտի առնէր:

Աւելի կատարելային ցանկալ, աւելի նպատակայարմար ուղղութիւն մը ձեռք բերելը մեր փափաքը և մեր ջանքը պէտք է ըլլայ, բայց ասի չը նշանակելու եղածին արժէքն ալ ուրանալ:

Անշուշտ կայ զգալի դանդաղութիւն մը մեր կրթական յառաջդիմութեան մէջ, կան խոշոր պակասներ մեր դպրոցական կազմակերպութեանց մէջ, բայց ասոնց սկզբնապատճառները շատ անգամ հայ ազգին կարողութենէն վեր և հայ վարժապետին կամքէն գուրս են:

Իսկ ինչ որ իսկապէս կը վերաբերի անոնց, մենք կը վերադառնանք ուրիշ անգամ:

Վ.Ա.ԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

—)(—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՈՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՑՔԵՐ
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ
ՅԵՆԱՓՈՆՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄ

ԵԶՐԱՎԱՑՈՒԹԻՒՆ

Գ.

Երկրորդ մը՝ այն է 1890 թուականի Կարգենիսի դէպքն, որ ամբողջ Մոսկովայի անիշխանականութեան մատնեց, երթեւեկութիւնը դադարեցաւ, առեւտրական կապերը խզուեցան, երկրագործութիւնը մեղաւորներու գրութեան դատապարտուեցաւ: Այլևս խեղճ հայ գիւղացին հարկադրուեցաւ փակուել իր պապե-

նական խրճիթին մէջ ու մինչև անգամ չի համարձակելով իր արտը երթալ վարելու: Իսկ գիւղերներն ալ ամէն օր, ամէն հայ գիւղի վրայ խուճեր կազմած քիւրտ խուճանը յարձակումներ կը գործէ՝ կողոպտելու, առեւանդելու եւ սպաննելու դիտումով: Միւս կողմէն հայ գիւղացին, այլևս քաջ համոզուած լինելով որ իր կեանքի վերջին վարկեանը հնչած է ինչպէս իրբեւ ստրուկ, ձեռքերն կապած՝ չի պիտի կենար, ամենայն հիւսթեամբ տանելու այն ամէն գազանութիւններն որ իր աչքի առջև պիտի գործուէին, իր եղբոր կամ զաւակի յօշոտումն. և իր կնոջ քրոջ և թէ իր ազգական բռնաբարուած համակերպութեամբ գիտելու: Այս ամէն բաները նախատեսելով հայ գիւղացին, իր մէջ արմատացած դարաւոր ստրկական ոգին սկսաւ թոթափել իրմէ, նոր սիրտ և նոր ոգի առնելով ան-

ցաւ մէջտեղ մինչև վերջին շունչը կռուելու, և այսպէս ազատ ապրած քիւրտն ու դարաւոր ստրկացած հայն մէկգիւղէկու բախիլ սկըտան: Երկու կողմէն ալ 40 օրուան մէջ բաւական թուով վիրաւորուածներ տալով մինչև որ 7 զօրաբանակի հրամանատար Ձէքին, 40,000 զինուորներով Մոսկովայի կողմ ու պատրաստ գտնուեցաւ: Եթէ տաճիկ կառավարութիւնը ցոյցերու ու շարժումներու պատճառաւ հային կողոպտեց ու սպաննեց, ուրիշ այդ միջոցին, քանի որ յարմար առիթ ներկայացած էր, ինչո՞ւ այդ զինուորական ահաբեկի ուժով, քիւրտ և թիւրք խուճանով Մոսկովայի իր 13 գաւառներով մէկտեղ չի ջնջեց, կրկին այդ դէպքի մանրամասնութեանց պատասխանատուն հայը բռնելով:

Երրորդ՝ 1890 թուականի վերջերը, երբ Տամարը Հնչակ կուսակցութեան կողմէ ներկայացուցիչ կարգուելով

Մուշ մտաւ, իր լրջմտութեամբ սկըտաւ պարզ գիւղացիին համակերպիլ, երկար երկուք ու կէս տարիներ ապրեցաւ գիւղական պարզ խրճիթներու մէջ, իր ծանրաբարոյ վարքով ու բարքով, և իր սովորուն ու հաստատ կամքով ամբողջ Մոսկովայի ու Մասնոյ ժողովրդեան համակրանքն ու սէրն դէպի իրեն քաշեց. լուիկ ու միջիկ կաշխատէր գիւղեր ցորեկ անձանձիւր, նախ ժողովուրդը պատրաստելու, երկրորդ՝ երբէք տեղի չի տալու կառավարութեան ուշադրութիւնը դէպի հայը դարձնելու եւ երրորդ՝ ալ քիւրտ դրացի տարբին հետ համբարաշխ ապրելու միջոցներ ձեռք առած՝ կողքեր և կաշխատէր, եթէ կարելի է կապակցութիւններ եւս հաստատել զանոնք եւս յեղաշրջելով, Դժբարտաբար Մուշն իր գաւառներով այսպիսի խոհեմ ու լուրջ գործիչ մը զրկուեցաւ հանգամանքներու ձախող բերմամբ, յիշեալին ձերբակալմանը պատ-

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

ՆՈՒՒՐ ԱՌ ՕՐ. ՄԱՆԻՇԱԿ

«Խնայողութիւնը կը բուրացնէ զվարդ, անգործ դարձնուի ֆաշտը ֆաշտը քան զհեղձմանն եւ Տկարին բարեկամը օրհնէն է, ան կողմէն անկէ ինչ ողորկել, աշխատիր սահմանել, բայց ՊԱՏԵՐԱԶՄԸ յարկարհի կը կոչի ՈՅԺԸ, անկէ ինչ կը բարձրացնէ անկուս վեճութեան, բոյնի անգամ կը ներշնչէ արիւնքի»...

ՇԻՂԵՐ

Ա.

Կեղեցիկ Զուրկերիոյ լեռնային գաւազնի թանգ է գնորդ իր հայրենիքի ազատութիւնը, կատարելի եւ արիւնտ կտրու է մղեր օտար բռնաւորներու դէմ, անոնց ատելի լուծը թօթափելու համար, եւ այդ շրջանը, որ այսօր դարձեր է պատմական մի անցեալ, չէ գաղթած ազատաւէր զուրկերիացիին ոգեւորելէ: Միբայ հայրենիքի ազատութիւնը, հօրենական այս սրբազան ժառանգութիւնը պահպանել առաջին եւ նուիրական պարտականութիւնը կը համարէ ան եւ կը պաշտէ ատար միակ միջոցը՝ զէնքը, եւ զինամարտութիւնը դարձած է իրեն մի սիրելի գրօտանք: Այդ նպատակով քաղաք ու գիւղ կազմած են հրացանաձգական ընկերութիւններ: Ամէն կիրակի կամ տօն օր կը թնդան հովիտներ ու ձորեր հրացանի օրոտումով:

Բ.

Կիրակի կէս օր է, օդը գեղեցիկ ու պայծառ: Զուրկերիոյ հարաւային արեւելեան կողմը մի հսկայ լեռան ստորոտ խմբուած են զինեալ մարտիկ, անդական հրացանաձգական ընկերութիւնը եկած է իր սովորական փորձերը կատարելու: Զէնքերուն մեծ մասը կը կազմեն զուրկերական նորագոյն ձեւի տասներեք հարուածեայ հրացաններ, որոնցմով կարելի է 300 էն մինչեւ 2000 մէթր հեռաւորութեան վրայ նշան առնել եւ անօրինակ արագութեամբ տասներեք անգամ կրակել: Փողը հնչեց, ձորը զղրգաց հրացանի պայթիւնով, նշաւակներու եւ

կանգնած մարդապատկերներու վրայ սկսաւ կրակ անդալ հրացանի օրոտը, յուշարար փողի ընդհատուած հնչումը հրացանաձգներու արձակած ուրախ եւ զուարթ աղաղակները միանալով կատարած զեռի գոռ ու գոչումի հետ կը կազմեն մի վայրենի նուագ, եւ բնութեան զաւակը կը հրճուի հոգեկան անհուն բաւակներովեամբ: Հրացանաձգներու մէջ մասնաւոր ուշադրութիւն կը գրաւէր մի երկտասարդ որ կը կրէր ուսանողի գլխարկ:

Գ.

Հրացանները լռեցին: Երիտասարդը ուսին հրացան զարկած սկսաւ լեռնէն վեր բարձրանալ: Անոր քաշազնական դէմքը, որու գծերը կարտայայտէին իր վեհանձն եւ բարի բնաւորութիւնը, թուղպ էր պատած աչք անգամ: Առանց այ ու ձախնայելու արագ արագ դէպի վեր կարշաւէր ան, կարծես հոգեկան մի ինչ որ զգացում դէպ յատաջ կը մղէր զինքը: Երիտասարդի լսյոր շարժումները, դէմքի ազդու բացատրութիւնները կարտայայտէին համարձակ ուսանողի եռանդոտ բնաւորութիւնը: Իր Պարթեական հասակը, խիտ եւ թու մազերը, սրորուած պետեղը, կենդանի եւ վառվառն աչքերը կը մատնէին անոր հայկական ծնունդը:

Նա հասնելով մի հովիտ կրթնեց հրացանին եւ սկսաւ մի խորտա մարտերգ հնչեցնել:

Մնացեալ բարեաւ սէր իմ սէր, Հրաւէր մարտին օրոտաց, Թէ ես քով չեմ ընկեր Թէ չկայ փառաց ինձ բաժին...

Ո՞վ էր այդ հայ երիտասարդը, որու կուծքը հրգեհուեր էր պատերազմի սիրով:

Դա հարցանաձգներու մէջ ընդհանուրին ուշադրութիւնը հրաւիրող ուսանողն էր, Հայաստանի Մոփք գաւառացի Գաղիկը:

Ըստ երեւոյթի կը ներդուէր երիտասարդը, ան իր շուրջը տնհանդիստ ակնարկներ նետեց, բայց ոչինչ նշմարելով ինքնիրենը հարցուց. «այսօր ինչու ուշացաւ,» բայց շուտով բացազանչեց. «անհրազան, ան է,» նստեցաւ մի տերեւախիտ ծառի շուքին սակ:

Եկողը մի օրիորդ էր, սրու բարձր հասակը, սեւ եւ մինչեւ մէջքը հասնող վարսերը, կամար յօնքերը, խո-

չոր եւ փայլուն աչքերը միանալով վարդակարմիր թշերուն կուտային անոր շնորհակազմ իրանին հրաշալի գեղեցկութիւն, լեռնային կանանչազարդ հովիտին մէջ ան կը նմանէր զիցուհւոյ մը: Դա Կ. Պալեցի Թր. Աշխէնն էր, որ ստանալով հայկական բարձր գաստիարակութիւն՝ եկեր էր Զուրկերիոյ մանկավարժութեան ճիւղը մշակելու: Մասնաւոր եռանդով ուսումնասիրած էր օրիորդը Հայպատմութիւնը եւ գրականութիւնը, Հայաստանի եւ Կիլիկիոյ աշխարհագրութիւնը: Մայր աշխարհի բարձր լեռները մի մասնաւոր վեհութեամբ կը խօսէին օրիորդի քնքոյ սրտի հետ, կրկնազարդ Արարատը կը կոչէր նա հայ լեռներու թագուհին, իսկ քառագագաթ Արագածը անոր թագաւորը: Այսպէս սերած եւ ուսումնասիրած ըլլալով իր տոհմը նա ճանչցած էր հայ ազգը իր բոլոր գեղեցիկ ու տրգեղ կողմերով եւ նուիրուած էր անոր բոլոր սրտով, անխաբախ սիրով: Արհամարելով կեանքի ամէն վայելք, նա ուխտեր էր մանկավարժական նոր մէթոտներով օգտակար հանդիսանալ հայ մանկան, մանաւանդ իր սեռի այնքան ետ մնացած գաստիարակութեան բարձր գործին: Արդար զայրոյթով կը խօսէր հայ կրթութեան դասակարգին վրայ, որ հայուն անհասկնալի օտար հեղեղակներու նմանելով, անոնց բոլորովին ուրիշ շրջանակներու համար գրած երկասիրութիւնները կարգմանով զանց առած են ստեղծել հայկական զուտ գաստիարակութիւն մը, նոր եղանակով եւ մանկավարժական հիմքերու վրայ հաստատուած:

Դ.

Յուշիկ քայլերով մօտեցաւ օրիորդը Գաղիկի եւ բարեւեց քնքոյութեամբ:

—Ողջո՞յն սիրելի Աշխէն, ուրախ եմ որ վերջապէս եկար. պատասխանեց Գաղիկ բռնի ժպիտով մը եւ ջանալով իր տիրութիւնը ծածկել:

Օրիորդը չի բաժնելով իր գեղեցիկ աչքերը երիտասարդի աչքերէն կարողաց անոր հոգու խորը:

—Ներողութիւն, այո՛, այսօր քիչ մը ուշացայ... բայց ըսէ, այսօր ինչու տիրուր ես:

—Քոյ ներկայութեանը ես ե՞րբ եմ տիրուր եղեր, որ այսօր ըլլամ յարեց Գաղիկ:

—Ես ի՞նչ գիտնամ, օտարներու սոսքեղ տօմած սէրը ու գգուանքը քեզ անելի տանջեր են, քո սիրտը

անելի խոցեր են միշտ, բայց իմ ներկայութեանը դու ուրախ եւ զուարթ ես եղեր, իմ ներկայութեանը քու ծանր լեղուն միշտ բացուեր է, բայց այսօր ինչու այսպէս լուս եւ տիրուր ես, կոյզե՞ս որ երթամ...

—Ո՛հ, իմ նազելի անմեղ հրեշտակ, օտարութեան մարդաշատ անպատի մէջ դուն, իմ ցանկալի հայրենակցուհին, գարձեր ես հոգուս միակ մխիթարութիւնը, առանց քեզ իմ կեանքը կը դառնար օտար աստղերու սակ խիստ դառն եւ անտանելի, դու ես իմ արիւնտաւած սրտի միակ սպեղանի, դու մի՛ մեկնիր իմ քովէն, դու կեցիր իմ մօտ եւ ես տիրուր չեմ ըլլար:

—Հապա ի՞նչ պէտք է նշանակէ այդ թախտութիւնդ, ի՞նչ է ատոր պատճառը...

—Ես թախտ չունիմ, նազելի Աշխէն, բայց այսօր իմ գնդակներու մեծ մասը վրիպեցաւ նպատակակէտէն, ինչ որ զիս շատ նեղացուց:

—Չէ՛ Գաղիկ, այդ անշարժութիւնը պէտք չէ տրտնեցնէ քեզ, դու չե՞ս գիտեր որ գերմանական առածը այնքան իմաստուն կըսէ. «անեն բանի սկիզբը դժուար է»: Դա առաջին փորձն է, անհոգ եղիր, դու քիչ ատենէն կը դառնաս մի լաւ հրացանաձգ, ըսաւ օրիորդը կուսական անմեղ հրճուանքով:

—Հա՛ Գաղիկ դու զիս հետդ Հայաստան կը տանիս, ես շատ օգտակար կըլլամ քեզ եւ քու հայրուկ ընկերներուդ, այնպէս չէ՞:

—Ո՛հ ի՞նչ քաղցր կը խօսիս, թանկագին Աշխէն, ես քեզ կը տանիմ իմ հետ Հայաստան, անմեղ գառնուկս, մեր հայրենի աշխարհը, որու կարօտը մեր սիրտերը այնքան կը տանջէ: Գու ներկայութիւնը, քու սրբազան ոգեւորութիւնը գերի հայրենիքի ազատութեան նուիրանքներու համար, կը ներշնչէ յեղափոխական եղբայրներուդ արիւնքին, անոնք կը գործեն քաղաքեան հրաշքներ... եւ կը լուծուի մեր լիկուած, խողխողուած եղբայրներու, կործանուած տաճարներու վրէժը...

Երկինք նախեցաւ զժրադդ հայրենիքի այս տարաբաղձ բայց գաղափարական զաւակներու վրայ եւ ժպտաց:

Ե.

Անցաւ մի շաբաթ, Կիրակի է, արեւը բարձրացած է իր զէնքի թիւն

ճառաւ իրեն յաջորդեց Մուրատը: Այն եւս սկսաւ Տամատի ուղիին հետեւել մինչեւ 1894 թուական, Այդ թուականը յիշեալ երկու անկեղծ հայրենասէր գործիչներու երկար տարիներու շարքին մէջ առաջ բերած աշխատութիւնը վեր ի վայր յեղաշրջեց, ատոնց կողմէ տրուած առանց ո՛ր եւ է պատճառի մը. մէկէն ի մէկ Սասունը 13—20 օրուան մէջ աւերակաց կոյտ մը դարձուց կատաղարութիւն սրէ անցնելով: Ինչու՞ 1890ի վարդենիսի նշանաւոր դէպքն, որ շատ մը մարդասպանութիւններ, կողպուտներ եւ միանգամայն 40 երկար օրեր երկիրն անխիտանականութեան մտանուելն դուրս բերելով, ատոր հանդէպ տաճիկ կատաղարութիւնը բան մը չի կրցաւ եւ կամ չուզեց ընել, ալ անելի յարմարագոյն միջոցին սպասելով, այժմ ալ ի՞նչ բանէ թելագրեալ Սասուն մը աւերարակաց կոյտ կը գործունէ, քանի որ

չի գործուեցաւ այն ինչ որ 1890ին տեղի ունեցաւ. եթէ ցոյ՛ւր եւ դէպքեր տեղի տուին հայր ջնջելու, անելի լաւ միջոցը չէր 1890ին բնաջինջ ընել հայը, քան թէ 1894ին, որ ատեն ո՛րեւէ ինքզինքը արդարացնելու փաստ մը չի պետի կրնար իր ձեռք ունենալ, ինչպէս որ քննութեանց ժամանակ ալ հաստատուեցաւ եւ այսպիսով Սասուն մը ատոնց պատճառի եւ ատոնց նախապարձայ ըլլալու՝ իր անելի լուծումը գտաւ, որ այսօր կենդանի օրինակ մըն է մեր աչքի առջեւ:

Չորրորդ մը՝ Պանոսի ցոյցը 1896ին սկսեալ սովորական քննադատութեան նիւթ մըն է դարձան մի մէջ, առարկելով թէ՛ «եթէ պանոսն չը մտնէին, ու ուսմբեր չը պայթեցնէին» Պալեցի կոտորածը դուրս չի պետի գար, առ այժմ մինք եւս այդպէս ըմբռնեմք. ուրեմն եթէ պանոսն մտնելով ու ուսմբեր պայթե-

ցնելով կոտորած դուրս բերաւ, ապա՛ 1897ին նոյն ուսմբի ձայնը պանոսայէն անելի բարձր տեղէ մը եւս դուրս եկաւ, այսինքն՝ տաճիկ կառավարութեան սրտէն Բ Դռնէն: Ո՞վ էր կրկին պայթեցնողը, եթէ ոչ այն յեղափոխական կուսակցութիւնը եւ հայ կոմիթէն, որ պանոսայի ցոյցը կազմակերպեց ու դուրս բերաւ, ապա ուրեմն այդ միջոցին, ինչու՞ կրկին կոտորածներ տեղի չունեցան, միթէ՞ նոյն գաղան Սուլթանը չէր նորէն, որ 1895 ու 96ին հայկական գաւառներն, ու Պալեցի հրապարակը արեան ճա՛րճ դարձուց. ինչու՞ 1897ին եւս չկրկնեց, միթէ՞ իր գործած դազանութեանց վրայ զգաստանալով խրդճահարուեցաւ. ինչու՞ հայուն թէ ոչ ուրիշ ներքին հաշիւներն ունէր, եւ ատոր համար ալ հարկադրեցաւ լռել:

Արդ՛ սոյն վերոյիշեալ քանի մը կենդանի սպացոյցներն մէջտեղ բե-

րելով, այն եղբակացութեան կուսակցութեան թէ՛ ո՛չ թէ՛ հայկական յեղափոխական շարժումները կոտորածները ստեղծելով դուրս բերին, այլ եւրոպական աննպատ քաղաքականութիւնը, եւ միանգամայն Պերլինի 61րդ յօդուածը, որ տաճիկ կատաղարութիւնը այդ գաղափարութիւնէն յետոյ, հայոցս նկատմամբ օրէնքներ փոխելով, հայաջինջ ծրագիր մը դուրս բերաւ, եւ 1878 թուականներէ սկսեալ, նիւթապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս ճնշելու հայ տարրը, եւ այսպէսով ձուլուելու, կամ գաղթելու տալ միջոցներուն գիտնելով, այժմ անվերջ ճնշման եւ հարստահարութեան մէջէն հետզհետէ սկսան խուլ արձագանքներ բարձրանալ. դարձաւ ատոր թուեմն սթափուել. այն ստրկական լուծն որ իր ուսին էր բեռնուած ամենայն կուսութեամբ տանելու, այլ եւս ձայրայղութեան համարով անկարելի եղաւ տանելն

վրայ, մի գալարագեղ հովիտի մէջ, ուր կը փչէ զովորտի զեփիւռ, մի հսկայ կենսասնիի տակ նստած է երիտասարդ Գագիկը եւ կերգէ.

«Ո՞վ չի երդնուր ընկերաց,
Պաշտպան լինիլ հայրենեաց,
Վերջին արիւնը թափել
Հայրենիքը պաշտել...»

Անա՛ երեւոց նաեւ գեղեցիկ Աշխէնը. Գագիկ անոր գէժ վագեց.
— Իրտես Աշխէն, այսօր իմ զընդակները չը վրկայեցան նպատակակէտէն. ճիշդ մարդապատկերներու կուրծքին, գանկին զարկի, եւ այս ուրախացուց զիս անհունապէս...
Սա Գագիկի ուզական առջին յաջողութիւնն էր:

Ա. ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ
Զուրիցերիա, 1 Յուլիս

ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Պարտականութիւն մը կատարած ըլլալու գիտակցութեամբ և լոկ հանրութիւնը լուսաբանելու համար միայն է որ ձեռք կառնեմ Ֆիլիպպի ծանօթ գարոցական ձեռք խնդիրը, որ ինքնին թէեւ անկարեւոր, բայց մեր հակառակորդներու կողմէ տարապալմանօրէն մեծցուած և խեղաթիւրուած ելաւ դատարանի առջեւ և մամուլի մէջ:

Կէս օրէ առաջ դատարանի մըն էր, երբ աշակերտներուն հետ զբօսավայրն իջած, և չորս դաստուներ անոնց մէջտեղը կեցած կը խօսէինք, յանկարծ մեր ետեւէն աղմուկ մը բարձրացաւ, վաղցցիկն ալ կողմը, աշակերտ մը ուրիշ մը կը ձեռնէր, երկու ուրիշ դասատուներու քթին տակ, որոնք պարզ հանդիսատես կըլլային առանց միջամտելու:

Պ. Շահրիման որ աղջկանց վարժարանէն եկած էր մէկ ձեռքը գիրք և միւս ձեռքը գաւազանը բռնած, խմբուած աշակերտները ցրուեց, կուռողները բաժնեց իրարմէ, և գաւազանը ու գիրքերը թողլով, յանցաւորները զատեց և յանդիմանեց ու ապականեց զանոնք:

Ապտակուած աշակերտներէն մէկը՝ որ նոյն օրը ամբողջ շարունակեց գարոց գալ, առանց մէկ կողմը վերաւորած, և կամ հիւանդ ըլլալու, յաջորդ օրը միայն գագրեցաւ դպրոցէն՝ երբ արդէն իր հայրը ուրիշներու կողմէ լեցուած և գրգռուած վարժարանին ու վարժապետներուս գէժ, ու է առիթի մը կը սպասէր իր ոյժը ցոյց տալու:

Այս ապտակուած աշակերտը ոչ մէկ վայրկեան հիւանդ պառկած է և ոչ ալ դեղ առած ունի, բան մը որ ինքն ալ խոստովանած է գատաւորին առջեւ, և որուն ճշգրտութեան կրնան վկայել գրացիները, բազմաթիւ աշակերտներ՝ հակառակ տրուած և տրուելիք բժշկական հաշարաւոր տեղեկագիրներու:

Իսկ ինչ որ Պ. Պիօնեան ըսու վէրքին համար իրականութիւնն էր, այսինքն թէ տղան իր վէրքը Մարքովայէն առած էր, և այս մասին ներկայ աշակերտներէն մէկը միայն հարցաքննուեցաւ, որուն վկայութիւնը սակայն կանգիտանամ, քանի որ պուլկարեւնէն խօսեցաւ:

Ահա այսօր ամբողջ իրողութիւնը. այսպէս վկայեցին ինծի հետ պաշտօնակիցներէս Պիօնեան, Սարգիսեան, Տէր Կարապետ քահանայ և բարձրագոյն կարգի աշակերտները (*):

Հոգաբարձութեան ատենապետ Տիար Գանթարեան, որ իր ուղղամտութիւնովը իրաւամբ վայելած է և կը վայելէ ամբողջ Ֆիլիպպիցիներու յարգանքը, իր պաշտօնական հերքմագրին մէջ երբէք չէ ստած, երբ վկաներու մեծամասնութեան և աւելի ա-

(*) Զարմանալի է որ թղթակիցը իրեն նպատակաւ վկաններէն մէկուն անունը կը պահէ, որ վերջին օրերուս մէջ իր պիտակ վարժարանովը, իրաւամբ կասկածելի դարձաւ թէ ինքն է եղած օրը օրին տեղեկաբերը ապտակուած տղուն հօրը, եւ գլխաւոր պատճառը այս ցաւալի դատավարութեան:

Դ. Յ.

նոնց նկարագրին վրայ կրթնելով կըսէ թէ՛ լսկ ապտակած է, թէ՛ տղան հիւանդացած չէ, թէ՛ վէրքը Մարքովայէն ստացած է, կամ մեր դպրոցին մէջ ակրա կոտրած չունի:

Պ. Շահրիման իրաւ գատապարտուած է տուգանքի, բայց վերջնական վճիռ մը չէ այս, և վերաքննութեան դիմած է: Եւ թէ մեր Ֆիլիպպի հակառակորդները գոհ կըլլան արդէն ձեռք բերուած վճռով, և ալ այժտքը չեն տեսներ վերաքննութեան վճռին սպասելու, և կուզեն որ Շահրիման անպատճառ տղայ գանակոծած ըլլայ. Գանթարեան ստած, և մենք ալ թերեւս սուտ վկաներ եղած ըլլանք, բնաւ ջանք չենք ընիր այդ միութարութիւնին իրենցմէ խլելու. թող թափալկին իրենց շահած դափնիներուն վրայ. — մինչեւ անգամ չեմ յիշեր Տիար Գագրեանի վկայութեան յաւելուածը, ինչ որ իրենց գատապարտութիւնը պիտի ըլլար. իսկ մենք անվրդով կը շարունակենք մեր գործը. քանի որ ամբողջ Ֆիլիպպիցիներ մեզի ալ լաւ կը ճանչնայ զիրենք ալ:

Կը փափաքէի որ Ֆիլիպպի ընկերներս և բարեկամներս բաւական սեպէին բուն իրողութեան այս պարզ պատմութիւնը, և խնդիրը միանգամ ընդմիջտ փակուած նկատէին:

Վառնա Վ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգ. թէեւ երբէք չեմ անձնական ու է կիրքերու յաղուրդ տալու նպատակաւ հրապարակ եկել, սակայն տեսնելով և կարգաւով թերթիդ 242րդ թիւին մէջ «Ոմն» ստորագրութեամբ՝ ուղղակի անձնական ինձ անձամբ յօդով յարգելու մը, կուգամ եղելութիւնը իր ստուգութեան մէջ պարզել, այն ալ ոչ թէ կարեւորութիւն տալով «Ոմն»

թշնամական ոգւոյն, այլ միայն բուժիչու ընդհանրութեան միաժիտ մասին գայթակղութիւնն, որը կրնայ վնասաբեր ըլլալ ուրիշ բարենպատակ առիթներու մէջ:

Ակնարկուած նուագահանդէսին մասնախմբի պատուարժան անդամաց ստորագրութեամբ 4 Դեկ. 1899 թուականաւ թաղական խորհրդոյ յանձնուած հաշուեցոյցին ելքի մասն իր նոյնութեամբ կը ներկայացնեմ որ է հետեւեալը.

Table with 2 columns: Item description and Amount. Includes items like 'Չանագան ծախք', 'Ֆիլիպպի Թաղ. Խորհրդոյ զրկուած (*)', 'Ազգ. Պատրիարքարան զըրկուած 55 նաբօլէոն', 'Սոֆիայի Թաղ. Խորհրդոյ Յանձնուած'.

Նոյնպէս հարկ կը դատեմ թաղ. խորհրդոյ սնտուկի տեսարակին մուտքին մասին մէջ 1899 Դեկ. 5 թուականաւ ևս արձանագրեալ մասը իր նոյնութեամբը յառաջ բերել, որ է 1899 Դեկ. 5 սովելոց համար տրուած քօնսէրի հաշուէն մնացած լէֆ 54,50. (տես էջ 18, սնտուկի տետր)

Արդ ընթերցողին կը թողում յիշել «Ոմն» կողմանէ լոկ անուարկման քօղին տակ տրուած տեղեկութեան որքան ստոյգ՝ և արդար ըլլալը որոշելու ձանձրոյթը. իսկ ես իմ կողմանէ կը հրաւիրեմ զինքը, եթէ ունի ուրիշ կասկածներ ևս անձամբ ներկայանալով բացատրութիւններ պահանջելու, խոստանալով միանգամայն որ կոչմանս անյիշաչարութեամբը սիրով պիտի լսեմ զինքը, և բաղձացած բացատրութիւնները տալու երբէք չպիտի զլանամ ի բուժումն իր իսկ գայթակղեալ մտաց. հակառակ՝ ձարագային այժմէն կը զեկուցանեմ որ ինձ համար երբէք կարեւորութիւն չպիտի ունենան

(*) Միեւնոյն նպատակաւ սարքուած վիճակահանութեան 100 տոմսակաց արժէքը:

հետեւարար հարկադրեցաւ թօթափել և իրիւ մարդ ապրելու, և իր գոյութիւնը պաշտպանելու միջոցները ձեռք առած՝ անգաւ սպարէզ, իր մարդկային իրաւունքներն պաշտպանելու, որոնցմէ ծագում առին ու զուրս եկան բաղխումներն, և օր ըստ օրէ երկու հակառակ տարրերու մէջ հակակրօթիւնը սկսաւ սուր կերպարանք ստանալ. երբեմն զմիւր մը իսկ իրեն հօմար անպէտք համարող հայ զիւղացին, այդ ատեններ, զէնքի անհրաժեշտութիւնը զգաց, ու առանց վարանման այդ կարեւոր գործիքին ղիմեց. «զորո կամեցիք թէ արասցեն ձեզ մարդիկ նոյնպէս արարէք և զուք նոցա» նշանաբանին հետեւելով Այլեւս գողութիւն, մարդասպանութիւն, բանտ, արտոր ու կախաղան իրեն համար նկատեց, ու իր առաջին քայլը, այդ փրկարար ուղին զբաւ, սկսաւ առաջ երթալ ու անքակտելի կապով մը մէկըմէկու

կապուել: Տաճիկ կառավարութիւնը զայս տեսնելով՝ օր ըստ օրէ նորանոր միջոցներու կը դիմէր, որպէս զի տեղն ու տեղը խեղդէր. մինչեւ որ իր ծրագրերն ի գլուխ հանէր, Բայց ի գործ, որովհետեւ այլեւս հայ զիւղացին չէր խաբուէր, 1880 թուականներէ սկսեալ մինչեւ 1890 թուականը տաճիկ կառավարութիւնը իր ամէն նենգ խորամանկութիւններն ի գործ դրաւ. բաժանումներ եւ երկպառակութիւններ հայ զիւղացիի մէջ մտցնելու, որպէս զի կարելի չըլլար ընդհանուր ապստամբութիւն մը զուրս գալ, և իր՝ զէպի հայ տարն ծրագրաններն վիժել, ինքն իր կործանիչ ծրագրաւ, հայն և հայկական հարցը ընդ առաջ կործանման փութացնելու համար. երբ խնդիր մը սուր կերպարանք առնուր, փոխանակ աւելի խիստ միջոցներու դիմելու ու ալ աւելի ճնշումներ ի գործ դնելու, ընդհակառակն կաշխատէր

զոցի՝ ապագային ձգելով ամէն բան, և առկէց էր որ կոտորածներ գուրս չէր գար. այդ սասն երկար տարիներու շարքին մէջ, որքան որ աշխատեցաւ, որքան իր խորամանկութիւնը ի գործ դրաւ, անկարելի եղաւ իր նպատակին հասնել. կառավարութեան այդ առած գաւազները քայլերն ևս առաւել սերտ կ'պով հայ զիւղացին մէկըմէկու շղթայելով սարսափ ազդեց թիւրք և քիւրտ տարրին, որ այլեւս կ'առավարութիւնը հարկադրեցաւ խիստ միջոցներու դիմել, կոտորածներու շարքն ստեղծելով զուրս բերել, և այնուհետեւ սկսաւ առաջ երթալ. Ուրեմն ինչ մեղաւոր է յեղափոխութիւնը եւ իր կազմակերպած ցոյցերն, քանի որ մեր գաղան թշնամիի ամբողջ 20 տարուան անց ու գարձն ակնյայտ յանդիման հրապարակի վրայ կեցած է, կարծեմ թէ՛ չի պիտի գտնուի մէկը որ այս անուրանալի ճշմար-

տութեան իսկ նկրտի տարրեր կերպարանք տալով կեղծել, Հուսկ ուրեմն՝ այս ամէնը տեսնելով ու կառավարութեան կործանարար ընթացքին հետեւելով՝ իհարկէ պիտի ըսենք, ոչ յեղափոխութիւնը եւ ոչ ալ կազմակերպուած ցոյցերն են մեղաւոր. այլ գաղան ու բռնաւոր Սուլթանը:

ՄԱԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Վ Ե Ր Ձ

այդ նպատակ գրութիւնք՝ քա- նի որ պաշտօնական հանգամանք չունին . և լոկ անձնական որ և իցէ գծուծ հաշիւներու արգասիք պիտի համարեմ զայնս :

Պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔՀՆ. ՖԵՍԼԵԱՆ Սօֆիա, 10 Յուլիս

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Բարիդ, Պ. Ս. — Կ. Տ. սպա- հով վիճակի մէջ է : Մեզի համար դեռ անորոշ է թէ՛ թուրք կառա- վարութիւնը խաբող է թէ՛ խաբ-ւող : Երկրորդի մասին լուր մը չունինք :

— Փ. Պ. Ծիծեռ : «Շարժում»-ի համար այդ խնդիրները փակուած են, և հետեւեալը ձեր գրուածքը չի պիտի հրատարակուի :

— Շնային-Պարահիսարի էնտիրէս գիւղացի Յարութիւն Մօլլէնց աճը Ռուսական կը գտնուի ե- ղեր, հասցէն ով որ գիտէ կը խնդրուի որ իմացնէ խմբագրու- թեանս :

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Պատրիարքարանի Խառն Ժո- ղովը ամսոյս 7ին գումարուեր է Ղալաթիոյ խորհրդարանին մէջ . նախագահութեամբ Պատրիարքին և ատենապետութեամբ Արթին փաշայի և որուն մասնակցեբ են Կրօն. և Քաղ. ժողովներու Պօլիս գտնուող գրեթէ բոլոր անդամ- ները :

Աս Խառն Ժողովը իր ամբողջ ժամերը նուիրեր է Կիլիկիոյ կաթողիկոսական անլուծանելի խնդրոյն համար, և որոշեր են խորհրդակցութեան և քուէար- կութեան արդիւնքը տեղեկագ- րել Դրան, ինչ որ նոյն օրը կա- տարուեր է Պատրիարքի ձեռ- քով :

— Ամսոյս 9ին, կիրակի օր Պօ- լիս Մայր Եկեղեցիին մէջ պատա- րագ և հոգեհանգստեան պաշտօն կատարեր են ի յիշատակ Մայր Եկեղեցւոյ և Մայր վարժարանի հիմնադիր Պէղծեան Յարութիւն Ամիրայի :

Այս հանդէսին մասնակցեր են Մայր վարժարանի աշակերտնե- րը, և Պէղծեանի դամբարանին վրայ դրած են ծաղկեայ փառա-ւոր օխաչ մը սա վերտառու- թիւնով, «Անմահ բարերարին Պէղծեանի, Պէղծեան սանունք երախտագէտք» :

Հայ հասարակութիւնը նոյն առաւել լեցուցեր է Եկեղեցին, և մինչև իրիկուն դամբարանը ուխտատեղի մը դարձեր է՝ ուր հա զարնեով հայեր եկեր են իրենց յարգանքը նուիրելու «ազգային անզուգական բարերարին» :

— Վանէն պատահական թղթակից

մը Սուրհանդակին կը գրէ թէ Վարագայ Որբանոցի վիճակը գո- հացուցիչ է, նիւթական և մտա-ւորական տեսակէտով . ու տեսու- ները պէտք եղածին և ժամանա- կին պահանջածին համեմատ կը մատակարարուին, նոյնպէս տրեւծ գասերը խնամով կաւանդուին :

Փափաքելի էր որ մեր ամբողջ Որբանոցներուն մասին այլ այս- պիտի նպատաւոր լուրեր առնէ- ինք, և մեր տարաբաղտ «որբե- րը» իրարու հացի աչք տնկելու վիճակին մէջ չըլլային :

— Պրոսպիտի ազգային մը վեր- ջերս Պօլիս կը գ. Հիւանդանոցն այցելելով, և աւոր շուրջը դըտ- նուած ընդարձակ և պարագ հո- ղերը տեսնելով, փափաք յայտ- ներ է որ այդ տեղերը թթաս- տաններ տնկուին . և ապահով- ցուցեր է որ Պրոսպիտները ձրիպէս կրնան մատակարարել թթենիի տունկեր . ինչպէս նաև ի հարկին հայթայթել շերամի հունս :

Եթէ ազնիւ Պրոսպիտ այս առաջարկն ընդունուի, Ազգ. Հի-ւանդանոցի համար շահու աղ- բիւր մը կը բացուի և մանաւանդ մէջի որբերուն այլ գործի նոր դուռ մը կը բացուի սորովիք :

— Խարբերդէն կը տեղեկագ- րեն Պօլսոյ թերթերուն թէ՛ տեղ-ւոյն բոլոր դպրոցները (քրիստոն- եայ և իսլամ) փակուեր են կա-ռավարութեան կողմէ . կարմ-բախտի պատճառով : Հիւսէյինի գիւղի մէջ մինչև 12 տարեկան հարիւրի չափ մանուկներ զոհ գացեր են այդ ախտին :

— Ֆիլիպէէն մեզ կիմացնեն թէ, վարժարանաց հոգաբարձու- թիւնը Ընդհ. Ժողովի որոշումովը զեղջած է դպրոցական պիւտճէն, քանի որ ազգապատկան կալ-ուածներուն հասութից նուազու- մովը և ազգային տուրքի մէկ մասին սպասուի մնալովը խոշոր բաց մը կը մնար անոր մէջ, և այս առթիւ մաս մը ուսուցիչներ հրաժարեցուցած են :

Յաւաջիկայ տարեջրջանի հա- մար վերընտրած են Տնօրէն Վա- հան Շահրիման, և ուսուցիչնե-րէն Կարապետ Պիօնեան և Վա- հան Մանուէլեան :

Կը շնորհաւորենք Ֆիլիպէի մեր ազգայինները, որ հակա- աակ իրենց մէջ գտնուած ինչ ինչ անհամաձայնութիւններու և տնտեսական տագնապին, կը ջա- նան վարժարանները կարելի ե- ղածին չափ բարձր և միօրինակ ուղղութեան մէջ պահել :

— Վաղը քաղաքիս Ս. Սարգիս Եկեղեցւոյ Դպրաց դասուն հաս- տատութեան առաջին տարեդար- ձին առթիւ՝ անոնց նշնեցեալնե-րու հոգւոյն համար Ս. Պատարագ և պաշտօն պիտի կատարուի ե- առձայն երգեցողութեամբ, և ա-ռաջնորդութեամբ դպրագետ Տ. Մ. Ղէրահանի :

—(—)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինական ներքին ապստա- մութիւնը կամ Եւրոպացիներու դէմ եղած պատերազմը, էրթա- լով ծանր հանգամանք մը կստա- նայ . մէկ կողմէն Եւրոպական զօրքերը կը շատնան անոր ե- ղերքները և կատաղի կռիւ կը մղեն, միւս կողմէն, Անգլիական թերթերու նայելով պաշտօնապէս պատերազմ հրատարակուած է արդէն Ռուսիոյ դէմ և Մանչու- րիոյ մէջ Չինական և Ռուսական բանակները իրարու կը բաղխին :

Բէքին գտնուող դեպոսաններուն և Եւրոպացիներուն սլջ կամ մե- աած ըլլալն այլ հանելուկ մը գարձաւ, ամէն օր զիրար հակա- սող լուրեր կուգան :

Չինու կ'սյրը որ հետզհետէ դիմումներ կընէ Եւրոպական ար- քունիքները . դիմած է նաեւ ճարտի կայսեր և անոր ցեղա- կան և կրօնական զգացումները շոյելով կը խնդրէ որ օժանդակէ իրեն ներքին ապստամբութիւն- ները խեղդելու և Եւրոպական միջամտութեան առաջը առնե- լու, ինչ որ կըսէ վտանգաւոր պիտի ըլլայ Չինական կայսրու- թեան գոյութեան, և որուն պի- տի յաջորդէ անմիջապէս ձա- բանի կործանումը Եւրոպացիներուն կողմէ :

Վերջապէս Մոնկոլական խար- գաւանանքի մը և արշաւանքի մը վախին առջեւը կը գտնուինք, և եթէ երբէք ձաբոն միանայ Չինու հետ . ճերմակ և դեղին ցեղերու ահագին կռիւ մը պիտի փրթի, որուն հետեւանքները կրնան ահաւոր ըլլալ :

— Ռուսիոյ Չարը բեր է, «եթէ ստոյգ ըլլայ դեպոսանիս սպանու- թիւնը, այն ատեն Բէքինի ար- քունիքը աւերակաց կոյ» մը պիտի դարձունեմք :

Իսկ դարձեալ Ռուս պետական մարդ մը յայտներ է որ, «եթէ երբէք Ռուս-Չինական պատերազմ ծագի, նախախնամութեան փառք աւալու ենք, եթէ Բեկերսպուրի կամ Մոսկուայի մէջ մէկ ուս ողջ մնայ :

— Ռուս ամիրալ Ալէքսէն՝ Չի- ֆուէն յուլիս 7ին կը հեռագրէ որ՝ միջազգային զօրքը երկու օր- ուան կատաղի կռիւէ վերջ թիէն Յինը գրուած է առնելով 40 թըն- դանթ և մեծ քանակութեամբ պատերազմական մթերք : Ռուս- ները ունին եղեր 200 սպաննուած և վիրաւոր :

— Ամերիկա կը պատրաստուի 4000 զինուոր զրկել Չինաստան :

— Բարիդի Չինական լիազօր դեսպանը յայտարարած է արտա- քին գործոց նախարարին թէ՛ կայ սերական հրովարտակի մը մէջ, որ արուած է յուլիս 5ին Նան- քինի փոխարարային, յայտարար- ուած է որ բոլոր օտար դեսպան-

ները ողջ և առողջ են, ու կը պաշտպանուին, բացի գերմա- նականէն . զոր սպաննողները խստութեամբ կը փնտռուին և պիտի պատժուին :

Ռերիչ ազբւրներէ ալ տեղե- կութիւններ կան դեսպաններու ողջ և առողջ և պաշտպանուած ըլլալուն մասին :

ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Աթէնքի համալսարանին գիմաց՝ թագաւորին, բազմաթիւ բրօֆէ- ստօրներու և ստուարաթիւ ժո- ղովորդին երկայութեամբ Գլխա- տօնի արձանը դրուէր է ի նշան երախտագիտութեան այն ծառա- յութիւններուն որ Գլխատօն մա- տուցած է Յունաստանի :

— Պօլսոյ Ռուսական դեսպանը խիստ կերպով բողոքեր է Դրան՝ «Մալիւմաթ» և «Սէրվէթ» պա- լասական թերթերուն հրատա- րակած, իսլամութիւնը գրգռող հրատարակութիւններուն դէմ :

— Պօլսոյ մէջ իսլամ կրօնա-ւորներու բարձրագոյն ժողովը ինչսա գումարուելով՝ որոշեր է պարսաւել և աշխատիլ պաղեցնել այն համակրութիւնը, որ ի նպաստ Չինացիներու սկսած է արտա- յայտուիլ թուրք պալատական շրջանակներու, ինչպէս նաև մա- մուլին մէջ :

— Սուլթանը որոշած է Մուսու- լի նախկին Վալին, Ապտիւլ Վէ- հայ ֆաշան և պետական խոր- հուրդի դատախազը, Նազիմ պէյ- իբը կայսերական գոմիսէրներ զրկել Սամոս կղզի՝ իշխան Վայա- նիսի և ազգային ժողովի մէջ տեղի ունեցած անհամաձայնու- թեան պատճառները քննելու :

— Էտիւնէ նահանգը Լոզէն- կրատ քաղաքին ֆրանսական հիւպատոսարանի թարգմանը ա-ւազակները փախուցեր են և 4000 լիբա փրկանք կուզեն :

— Սերպիոյ թագաւոր, Ալէք- սանտը նշանուեր է այրի Սեր- պուհի մը հետ, որ Նաթալի թագուհւոյն պալատական տիկինն է եղեր : Այդ տեսակ պարզ ա- մուսնութեան մը վրայ վշտա- ցած՝ Միլան թագաւորը հրա- ժարեր է զօրաց ընդհանուր հրա- մանատարութեանէն :

— Ժէնէրալ Բօյէրտս մեծ զօր- քով յարձակեր է Միտտէլ- պէրկի վրայ . Նախագահ Քրի- կէր Պօէրներու բանակի մէջ գըտ- նուեր է և ոգեւորեր է վճռական կերպով պատերազմիլ :

Ե Ջ Դ

Սերոն Բ. Տէրփիծեան, գիտէ ֆր- րանսերէն, հայերէն, և տաճկերէն գրաչարութիւն ով որ կուզէ թող հա- ճի իրեն հետ բանակցիլ, հասցէն է «Կայրէթ թերթի խմբագրութիւ- նը» :